ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

USAID
FROM THE AMERICAN PEOPLE

# Հայաստանի Հանրապետության 2017թ. խոշորացվող համայնքների նկարագրություն

# ԵՂԵԳԻՍ

## համայնք

**(Շատին, Աղնջաձոր, Արտաբույնք, Գողթանիկ, Եղեգիս, Թառաթումբ, Հորբատեղ, Հերմոն, Հորս, Սալլի, Վարդահովիտ, Քարաժայռ, Արատես, Կալասար, Գետիկավանք և Սևաժայռ բնակավայրեր)**

**Հեղինակ՝ Սարգիս Թովմասյան**

**Երևան – 2017**

**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ**

Եղեգիս խոշորացվող համայնքի կազմում ընդգրկվում է 16 գյուղ՝ Շատին (համայնքի կենտրոն), Աղնջաձոր, Արտաբույնք, Գողթանիկ, Եղեգիս, Թառաթումբ, Հորբատեղ, Հերմոն, Հորս, Սալլի, Վարդահովիտ, Քարաժայռ, ինչպես նաև ներկայիս Հերմոն համայնքի կազմում գտնվող Արատես և Կալասար գյուղերն ու Վարդահովիտ համայնքի կազմում գտնվող Գետիկավանք և Սևաժայռ գյուղերը: Հարկ է նշել, որ Արատես, Կալասար և Գետիկավանք գյուղերը չունեն մշտական բնակչություն, իսկ Սևաժայռում ընդամենը 32 բնակիչ է հաշվառված:

Համայնքի կազմավորումը նպատակ ունի Վայոց Ձորի մարզի հյուսիսային հատվածում ստեղծել տարաբնակեցման համակարգի նոր տեղային (զարգացման) կենտրոն՝ նպաստելով տարածքների համաչափ զարգացմանը և ապահովելով հանրային ծառայությունների հասանելիությունը համայնքի կազմում ընդգրկվող գյուղերի բնակիչների համար:

Համայնքի բնակչությունը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 6900 մարդ, վարչական տարածքը կազմում է 27611 հա:

**Փնջի ընդհանուր նկարագիրը**

Եղեգիս համայնքի գյուղերը գտնվում են Վայոց Ձորի մարզի հյուսիսային հատվածում՝ Եղեգիսի և դրա վտակ Սուլեմայի ավազաններում, Թեքսարի և Վարդենիսի լեռների միջակայքում:

Գյուղերի բարձրությունները ծովի մակերևույթից տատանվում են 1320մ (Շատին)-2450մ (Գետիկավանք) միջակայքում: Համեմատաբար ցածր նիշերում գտնվող գյուղերում կլիման չափավոր տաք է և չոր, շոգ ամառներով և ցուրտ ձմեռներով: Տարեկան տեղումների քանակը 400-450 մմ: Բնական լանդշաֆտները տափաստաններն են: Ավելի բարձրադիր գոտիներում կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Հաճախակի են չորային, երաշտի տարիները:

Բնակչության զբաղվածության հիմնական ուղղություններն են հողագործությունն ու անասնապահությունը, հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների մշակությունը: Գյուղատնտեսական հողահանդակների մեծ մասը վարելահողեր և արոտներ են, այսուհանդերձ, ցածրադիր գոտիներում կան նաև բազմամյա տնկարկներ: Տարածված է նաև մեղվաբուծությունը:

Տարածաշրջանը հարուստ է ինչպես բնության գեղատեսիլ անկյուններով, այնպես էլ պատմամշակութային ժառանգության օբյեկտներով, ինչը նախադրյալներ է ստեղծում էկոտուրիզմի և մշակութային տուրիզմի զարգացման համար:

Տարածաշրջանում կան նաև բնական պաշարներ, մասնավորապես գրանիտ և տրավերտին (Շատին): Սալլիում գործում են պանրագործարան և սառնարան, Եղեգիսում և Թառաթումբում՝ քարի մշակման արտադրամասեր:

***Համայնքի փնջերի համադրում «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգով» սահմանված՝ խոշոր համայնքի փեսլականի պայմանների և խոշորացման չափորոշիչների հետ***

*1. Տեղականով սահմանված՝ բավարար մարդկային ռեսուրսների պայման և խոշորացման չափանիշներից՝ առնվազն 3000 բնակիչ ունեցող համայնքի կենտրոնի առկայություն.*

Համայնքի կազմում ընդգրկվող գյուղերին բնորոշ է բնակչության փոքր թվաքանակը, 3 գյուղ ընդհանրապես զուրկ է մշտական բնակչությունից, ինը գյուղի բնակչությունը պակաս է 500 մարդուց (Աղյուսակ 1): 1000-ից ավելի բնակչություն ունի ընդամենը 2 գյուղ՝ Շատինը (2048) և Արտաբույնքը (1155):

Մտահոգիչ է համայնքի կազմում ընդգրկվող գյուղերի բնակչության շարժընթացի պատկերը: Ըստ էության, մշտական բնակչություն ունեցող 13 գյուղերից 10-ում հաշվառված բնակչությունը 2001-2016թ.թ նվազել է: Այսուհանդերձ, համայնքի կենտրոն Շատինում բնակչությունն աճել է 17 տոկոսով, ինչը դրական գործոն կարելի է համարել:

Աղյուսակ 1. Եղեգիս խոշորացվող համայնքի բնակչության շարժընթացը և խտությունը

| | Համայնք | Վարչական տարածքը /հա/ | Հաշվառված բնակչություն | | բնակչ.փոփոխութ. Տոկոս | Բնակչության խտությունը/մարդ/քառ.կմ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 2001թ. | 2016թ. | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Շատին | 3311 | 1754 | 2048 | 117 | 62 |
| 2 | Աղնջաձոր | 3011 | 449 | 437 | 97 | 15 |
| 3 | Արտաբույնք | 2465 | 1077 | 1155 | 107 | 47 |
| 4 | Գողթանիկ | 2493 | 209 | 198 | 95 | 8 |
| 5 | Եղեգիս | 1372 | 513 | 451 | 88 | 33 |
| 6 | Թառաթումբ | 1145 | 555 | 512 | 92 | 45 |
| 7 | Հորբատեղ | 954 | 280 | 262 | 94 | 27 |
| 8 | Հերմոն | 2916 | 203 | 204 | 100 | 7 |
| 9 | Արատես | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 10 | Կալասար | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 11 | Հորս | 2424 | 317 | 284 | 90 | 12 |
| 12 | Սալլի | 1683 | 235 | 234 | 100 | 14 |
| 13 | Վարդահովիտ | 3570 | 94 | 209 | 222 | 6 |
| 14 | Գետիկավանք | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 15 | Սևաժայռ | 0 | - | 32 | 0 | 0 |
| 16 | Քարագլուխ | 2267 | 931 | 874 | 94 | 39 |
| | Ընդամ./միջին | 27611 | 6617 | 6900 | 104 | 25 |

Շատին գյուղի բնակչության թվաքանակն ավելի պակաս է, քան համայնքի կենտրոնի համար խոշորացման չափորոշիչներով սահմանվածը, սակայն բնակչության աճի ներկայիս տեմպերը պահպանելու պարագայում, ապագայում այն կարող է հասնել անհրաժեշտ նվազագույն թվին:

Շատ անբավարար են բնակչության խտության ցուցանիշները, որոնք ավելի քան 4 անգամ պակաս են հանրապետության միջին ցուցանիշից: Աղնջաձորում, Գողթանիկում, Հերմոնում, Հորսում, Սալլիում և Վարդահովիտում այդ ցուցանիշն ավելի պակաս է բարենպաստ կենսամիջավայրի համար անհրաժեշտ նվազագույն խտությունից:

*2. Տեսլականով սահմանված՝ բավարար բնական ռեսուրսներով ապահովված լինելու պայման*

Մեկ բնակչի հաշվով քաղաքացիների և համայնքային սեփականության գյուղատնտեսական հողերի ամենամեծ ծավալները նախկին Վարդահովիտ համայնքում են՝ համապատասխանաբար 1,5 և 15,2 հա (Աղյուսակ 2): Խոշորացվող համայնքի կազմում կան նաև ավելի քան 18 հազար հեկտար կազմող պետական սեփականության գյուղատնտեսական հողեր, որոնց մեծ մասն արոտներ են:

Ընդհանուր առմամբ, 1 բնակչի հաշվով մասնավոր և համայնքային սեփականության հողերը խոշորացվող համայնքում կազմում են 3,8 հեկտար, ինչն ավելի քան 4 անգամ մեծ է հանրապետության միջին ցուցանիշից:

Աղյուսակ 2. Գյուղատնտեսական, հատուկ պահպանվող տարածքների, անտառային և արդյունաբերական նշանակության հողերը Եղեգիս խոշորացվող համայնքում

| | Համայնք | Հաշվառված բնակչություն 2016 | Գյուղատնտեսական հողեր | | | | | | | | | Հատուկ պահպանվող տարածքներ | Անտառային | Արդյունաբերության, ընդերք. և այլ արտադրական |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Քաղաքացիների սեփականություն | որից | | Համայնքի սեփականություն | Պետական սեփականություն | 1 բնակչի հաշվով | | | | | | |
| | | | | Բազմամյա տնկարկ | Վարելահող | | | Քաղաքացիների սեփականություն | Համայնքի սեփականություն | Ընդամենը | պետական սեփականություն | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1 | Շատին | 2048 | 245 | 6,2 | 132 | 2808 | 482 | 0,1 | 1,4 | 1,5 | 0,2 | 18,7 | 845,4 | 4,0 |
| 2 | Աղնջաձոր | 437 | 296 | 15,0 | 114 | 2607 | 214 | 0,7 | 6,0 | 6,6 | 0,5 | 15,0 | 0,0 | 1,4 |
| 3 | Արտաբույնք | 1155 | 189 | 9,4 | 5 | 2139 | 714 | 0,2 | 1,9 | 2,0 | 0,6 | 6,8 | 0,0 | 1,5 |
| 4 | Գողթանիկ | 198 | 171 | 0,0 | 167 | 2118 | 2474 | 0,9 | 10,7 | 11,6 | 12,5 | 0,3 | 136,3 | 1,5 |
| 5 | Եղեգիս | 451 | 102 | 12,0 | 24 | 1144 | 1648 | 0,2 | 2,5 | 2,8 | 3,7 | 17,3 | 1,5 | 5,2 |
| 6 | Թառաթումբ | 512 | 61 | 0,0 | 13 | 996 | 948 | 0,1 | 1,9 | 2,1 | 1,9 | 3,7 | 0,0 | 0,7 |
| 7 | Հորբատեղ | 262 | 78 | 0,0 | 42 | 790 | 988 | 0,3 | 3,0 | 3,3 | 3,8 | 1,4 | 0,0 | 23,9 |
| 8 | Հերմոն | 204 | 84 | 0,0 | 51 | 2484 | 2433 | 0,4 | 12,2 | 12,6 | 11,9 | 22,7 | 1518,4 | 0,1 |
| 9 | Արատես | 0 | 0 | 0,0 | 0 | 0 | 0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0 | 0 | 0 |
| 10 | Կալասար | 0 | 0 | 0,0 | 0 | 0 | 0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0 | 0 | 0 |
| 11 | Հորս | 284 | 343 | 7,8 | 144 | 1997 | 517 | 1,2 | 7,0 | 8,2 | 1,8 | 6,8 | 393,8 | 2,7 |
| 13 | Սալլի | 234 | 113 | 9,6 | 44 | 1521 | 221 | 0,5 | 6,5 | 7,0 | 0,9 | 4,7 | 0,0 | 2,7 |
| 15 | Վարդահովիտ | 209 | 306 | 0,0 | 152 | 3186 | 7186 | 1,5 | 15,2 | 16,7 | 34,4 | 0,5 | 0,0 | 3,0 |
| 17 | Գետիկավանք | 0 | 0 | 0,0 | 0 | 0 | 0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 19 | Սևաժայռ | 32 | 0 | 0,0 | 0 | 0 | 0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 21 | Քարագլուխ | 874 | 177 | 0,6 | 176 | 1938 | 447 | 0,2 | 2,2 | 2,4 | 0,5 | 3,5 | 12,7 | 6,6 |
| | Ընդամ./միջին | 6900 | 2165 | 60,6 | 1064 | 23727 | 18271 | 0,3 | 3,4 | 3,8 | 2,6 | 101,4 | 2908,2 | 53,3 |

Խոշորացվող համայնքում անտառային ֆոնդի հողեր ավելի քան 2900 հեկտար են. դրանց կեսից ավելին նախկին Հերմոն համայնքում է:

Համայնքի կազմում փոքր տոկոս են կազմում արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը (53,3հա), որոնց 45 տոկոսը նախկին Հորբատեղ համայնքում է:

*<u>3. Համայնքների խոշորացման փեսլականով սահմանված՝ բավարար ֆինանսական ռեսուրսներ ունենալու պայման</u>*

Խոշորացվող համայնքի կազմում ընդգրկվող նախկին համայնքներից սեփական եկամուտները մեկ բնակչի հաշվով հանրապետության միջին ցուցանիշից բարձր են միայն Գողթանիկում և Վարդահովիտում (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Սեփական եկամուտների ծավալները Եղեգիս համայնքում

| | Համայնք | Հաշվառված բնակչություն 2016թ. | Սեփական եկամուտ | |
|---|---|---|---|---|
| | | | 2013-2015թ.թ. տարեկան միջին /հազ.դրամ/ | 1 բնակչի հաշվով |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Շատին | 2048 | 4689 | 2,3 |
| 2 | Աղնջաձոր | 437 | 1967 | 4,5 |
| 3 | Արտաբույնք | 1155 | 2936 | 2,5 |
| 4 | Գողթանիկ | 198 | 1803 | 9,1 |
| 5 | Եղեգիս | 451 | 1307 | 2,9 |
| 6 | Թառաթումբ | 512 | 1076 | 2,1 |
| 7 | Հորբատեղ | 262 | 1114 | 4,3 |
| 8 | Հերմոն | 204 | 1309 | 6,4 |
| 9 | Արատես | 0 | 0 | 0 |
| 10 | Կալասար | 0 | 0 | 0 |
| 11 | Հորս | 284 | 1987 | 7,0 |
| 12 | Սալլի | 234 | 935 | 4,0 |
| 13 | Վարդահովիտ | 209 | 2583 | 12,4 |
| 14 | Գետիկավանք | 0 | 0 | 0 |
| 15 | Սևաժայռ | 32 | 0 | 0 |
| 16 | Քարագլուխ | 874 | 2348 | 2,7 |
| | Ընդամ./միջին | 6900 | 24053 | 3,4 |

Այդ ցուցանիշը շատ ցածր մակարդակի վրա է եղել հատկապես Շատինում, Արտաբույնքում, Եղեգիսում, Թառաթումբում և Քարագլուխում: Այդ հանգամանքն ազդել է խոշորացվող համայնքի՝ 1 բնակչի հաշվով միջին եկամուտի ցուցանիշի վրա, որը հանրապետական ցուցանիշից պակաս է ավելի քան 2 անգամ:

*4. Բնակավայրերի և համայնքի կենտրոնի միջև տրանսպորտային կապերը և ավտոմոբիլային ճանապարհների վիճակը*

Աղյուսակ 4-ում ներկայացված է Եղեգիս համայնքում տրանսպորտային կապերի և ավտոճանապարհների վիճակի ընդհանուր պատկերը: Բերված տվյալները ցույց են տալիս, որ համայնքի կազմում ընդգրկվող գյուղերից 7-ը գտնվում են համայնքի կենտրոնից բարենպաստ հասանելիության տիրույթում, 5-ը՝ սահմանափակ բարենպաստության և միայն 3-ը անբարենպաստ հասանելիության տիրույթում, որոնցից Գետիկավանքը չունի մշտական բնակչություն, իսկ Սևաժայռն ունի 32 բնակիչ:

Համայնքի կենտրոն Շատինը մնացած բնակավայրերի նկատմամբ կենտրոնական դիրք ունի: Այսպիսով, հասանելիության ցուցանիշը Եղեգիս համայնքում կարելի է բավարար համարել: Այսուհանդերձ, գյուղերը համայնքի կենտրոնին կապող ավտոճանապարհների մեծ մասն ընթացիկ կամ հիմնանորոգման կարիք ունեն:

Աղյուսակ 4. Տրանսպորտային կապերի և ավտոճանապարհների վիճակը Եղեգիս համայնքում

| | Համայնք | Բարձրությունը ծովի մակերևույթից | հեռավորությունը համ.կենտրոնից | | Հասանելիության ցուցիչ | Ճանապարհի վիճակը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կմ | րոպե | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Շատին | 1300 | 13,7* | 17 | | Ընթաց.նորոգ.կարիք |
| 2 | Աղնջաձոր | 1665 | 10,5 | 11 | Բարենպաստ | Բավարար |
| 3 | Արտաբույնք | 1700 | 4,6 | 10 | Բարենպաստ | Հիմնանորոգ.կարիք |
| 4 | Գողթանիկ | 1850 | 17,8 | 25 | Սահմ.բարենպ. | Հիմնանորոգ.կարիք |
| 5 | Եղեգիս | 1640 | 7,1 | 9 | Բարենպաստ | Բավարար |
| 6 | Թառաթումբ | 1640 | 10,7 | 14 | Բարենպաստ | Բավարար |
| 7 | Հերմոն | 1953 | 13,8 | 18 | Սահմ.բարենպ. | Բավարար |
| 8 | Արատես | 1747 | 17,5 | 27 | Սահմ.բարենպ. | |
| 9 | Կալասար | 1850 | 14 | 19 | Սահմ.բարենպ. | |
| 10 | Հորբատեղ | 1698 | 8,9 | 22 | Սահմ.բարենպ. | Հիմնանորոգ.կարիք |
| 11 | Հորս | 1650 | 8,3 | 11 | Բարենպաստ | Հիմնանորոգ.կարիք |
| 12 | Սալլի | 1578 | 6,7 | 9 | Բարենպաստ | Հիմնանորոգ.կարիք |
| 13 | Վարդահովիտ | 2050 | 20,4 | 33 | Անբարենպաստ | Ընթաց.նորոգ.կարիք |
| 14 | Գետիկավանք | 2450 | 27,2 | 40 | Անբարենպաստ | |
| 15 | Սևաժայռ | 2110 | 22,1 | 38 | Անբարենպաստ | |
| 16 | Քարագլուխ | 1650 | 9,1 | 12 | Բարենպաստ | Ընթաց.նորոգ.կարիք |

**Հեռավորությունը մարզկենտրոնից*

*5. Կրթական, առողջապահության և մշակութային ենթակառուցվածքներ*

Համայնքի գյուղերից մանկապարտեզ կա միայն Եղեգիսում, որը 2007թվականից չի գործում: 2017թ. նախատեսվում է Շատինում կառուցել նոր մանկապարտեզ:

Հանրակրթական դպրոցների առկայության և դրանց վիճակի վերաբերյալ տվյալները ներկայացված են 5-րդ աղյուսակում և ցույց են տալիս, որ դրանց քանակը բավարար է: Բնականաբար, դպրոցներ չկան մշտական բնակչություն չունեցող գյուղերում և Սևաժայռում:

Այսուհանդերձ, թերբեռնված են ինչպես միջնակարգ (ավելի քան 3 անգամ), այնպես էլ հիմնական (ավելի քան 5 անգամ) դպրոցները: Բացի այդ, գրեթե բոլոր դպրոցներն ունեն ընթացիկ կամ հիմնանորոգման կարիք:

Ոչ մի գյուղում երաժշտական, գեղարվեստի կամ սպորտային դպրոց չկա:

Աղյուսակ 5. Եղեգիս համայնքի հանրակրթական ուսումնական հաստատությունները

| | Համայնք /բնակավայր/ | Միջնակարգ դպրոց | | | | Հիմնական դպրոց | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | քանակ | տեղ | աշակ. | վիճակ | քանակ | տեղ | աշակ. | վիճակ |
| 1 | 2 | 3 | 4 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | Շատին | 1 | 1000 | 300 | Բավարար | 0 | | | |
| 2 | Աղնջաձոր | 1 | 150 | 45 | Բավարար | 0 | | | |
| 3 | Արտաբույնք | 1 | 300 | 131 | Ընթ.նորոգ | 0 | | | |
| 4 | Գողթանիկ | 0 | | | | 1 | 200 | 18 | Հիմնանոր. |
| 5 | Եղեգիս | 1 | 200 | 57 | Հիմնանոր | 0 | | | |
| 6 | Թառաթումբ | 1 | 160 | 50 | Ընթ.նորոգ | 0 | | | |
| 7 | Հերմոն | 0 | | | | 1 | 50 | 24 | Ընթ.նորոգ. |
| 8 | Հորբատեղ | 0 | | | | 1 | 40 | 23 | Ընթ.նորոգ |
| 9 | Հորս | 0 | | | | 1 | 120 | 5 | Հիմնանոր. |
| 10 | Սալլի | 0 | | | | 1 | 70 | 19 | Ընթ.նորոգ. |
| 11 | Վարդահովիտ | 0 | | | | 1 | 40 | 10 | Բավարար |
| 12 | Քարագլուխ | 1 | 500 | 84 | Ընթ.նորոգ | 0 | | | |
| | Ընդամենը | 6 | 2310 | 667 | | 6 | 520 | 99 | |

Եղեգիս համայնքի գյուղերում մշակույթի տների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է 6-րդ աղյուսակում: Գյուղերում առկա 12 մշակույթի տներից չեն գործում 4-ը (դրանցից երեքն ունի հիմնանորոգման կարիք): Բավարար վիճակում են Արտաբույնքի, Թառաթումբի և Սալլիի մշակույթի տները, ընթացիկ նորոգման կարիք ունեն Շատինի, Աղնջաձորի և Գողթանիկի մշակույթի տները:

Աղյուսակ 6. Եղեգիս համայնքի մշակույթի տները

| | Համայնք (բնակավայր) | Մշակույթի տուն | | |
|---|---|---|---|---|
| | | քանակ | տեղ | վիճակ |
| 1 | Շատին | 1 | 180 | Ընթացիկ նորոգման կարիք |
| 2 | Աղնջաձոր | 1 | 180 | Ընթացիկ նորոգման կարիք |
| 3 | Արտաբույնք | 1 | 300 | Բավարար |
| 4 | Գողթանիկ | 1 | 200 | Ընթացիկ նորոգման կարիք |
| 5 | Եղեգիս | 1 | 200 | Հիմնանորոգման կարիք |
| 6 | Թառաթումբ | 1 | 90 | Բավարար |
| 7 | Հերմոն | 1 | 250 | Հիմն.կարիք (չի գործում) |
| 8 | Հորբատեղ | 1 | 200 | Հիմն.կարիք (չի գործում) |
| 9 | Հորս | 1 | 140 | Հիմն .կարիք (չի գործում) |
| 10 | Սալլի | 1 | 50 | Բավարար |
| 11 | Վարդահովիտ | 1 | 120 | Բավարար(չի գործում) |
| 12 | Քարագլուխ | 1 | 150 | Հիմնանորոգման կարիք |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 12 | 2060 | |

Համայնքի 11 գյուղերն ունեն բուժկետեր: Աղնջաձորում, Արտաբույնքում, Եղեգիսում, Հերմոնում, Հորբատեղում և Վարդահովիտում գտնվող բուժկետերի վիճակը բավարար է: Ընթացիկ նորոգման կարիք ունեն Գողթանիկի, Թառաթումբի և Քարագլխի բուժկետերը, իսկ Հորսի և Սալլիի բուժկետերն ունեն հիմնանորոգման կարիք:

Շատինն ունի բավարար վիճակում գտնվող ամբուլատորիա:

Կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների տարածքային տեղաբաշխումը համայնքի գյուղերում ներկայացված է ստորև բերված քարտեզի վրա:




*Հապավումներ.-Ա-Ամբուլատորիա, ԲԿ-Բուժկետ, ՄՏ-Մշակույթի տուն, ՀԴ-Հիմնական դպրոց, ՄԴ-Միջնակարգ դպրոց*

Եղեգիս համայնքում համայնքների խոշորացման չափորոշիչներով և խոշոր համայնքի տեսլականով սահմանված պահանջների ընդհանրացված գնահատականները ներկայացված են 7-րդ աղյուսակում:

Աղյուսակ 7. Համայնքների խոշորացման պայմանների և չափորոշիչների ամփոփ գնահատականը Եղեգիս համայնքի պարագայում

| | **Խոշորացման պայմաններ և չափորոշիչներ** | **Ցուցանիշի գնահատական** | **Ծանոթություն** |
|---|---|---|---|
| 1 | Բավարար մարդկային ռեսուրսներ և առնվազն 3000 բնակիչ ունեցող համայնքի կենտրոն | Կարելի է պայմանականորեն բավարար համարել՝ հաշվի առնելով համայնքի կենտրոնի բնակչության աճի գործոնը | Շատինի բնակչության թիվը 2001-2016թ.թ. աճել է 17 տոկոսով |
| 2 | Բավարար բնական (հողային) ռեսուրսների առկայություն | Բավարար է՝ հանրապետության միջին ցուցանիշից 4 անգամ ավելի | |
| 3 | Ֆինանսական ռեսուրսների առկայություն | Բավարար չէ՝ հանրապետության միջին ցուցանիշից զգալիորեն պակաս է | |

| | | | |
|---|---|---|---|
| 4 | Տրանսպորտային կապեր | Բավարար է՝ հասանելիության անբարենպաստ տիրույթում ընդամենը 2 գյուղ է | |
| 5 | Ավտոճանապարհների վիճակ | Կարելի է պայմանականորեն բավարար համարել | Որոշ հատվածներում հիմնանորոգման կամ ընթացիկ նորոգման կարիք կա |
| 6 | Նախադպրոցական հիմնարկներ | Բավարար չէ | Մանկապարտեզ չկա ոչ մի գյուղում |
| 7 | Կրթական հաստատություններ | Բավարար է | Դպրոցների մեծ մասը ընթացիկ կամ հիմնանորոգման կարիք ունի |
| 8 | Առողջապահության օբյեկտներ | Բավարար է | Որոշ օբյեկտներ ընթացիկ կամ հիմնանորոգման կարիք ունեն |
| 9 | Մշակութային օբյեկտներ | Բավարար է | Որոշ օբյեկտներ ընթացիկ կամ հիմնանորոգման կարիք ունեն |
| 10 | Ընդհանուր սահմանի առկայություն | Առկա են | |
| 11 | Համայնքի կենտրոնի կենտրոնական դիրք | Բավարար է | |
| 12 | Բնակիչների համատեղելիություն և մենթալություն | Բավարար է | |

Այսպիսով, ընտրված 12 պայմաններից և չափորոշիչներից Եղեգիս խոշորացված համայնքը լիարժեքորեն բավարարում է 8-ին:

Հիմնական շեղումներն են՝

➢ համայնքի կենտրոնի բնակչության անբավարար թիվը, որը, սակայն, կարելի է պայմանականորեն բավարար համարել՝ հաշվի առնելով բնակչության աճի միտումները,

➢ սեփական եկամուտների միջինացված ցուցանիշը պակաս է հանրապետության գյուղական համայնքների համարժեք միջին ցուցանիշից,

*Ծանոթություն. Խոշոր համայնքի տեսլականով սահմանված՝ բավարար ֆինանսական ռեսուրսներ ունենալու պայմանը սոսկ տեսականորեն է կիրարկելի, քանի որ հանրապետությունում չկա ոչ մի ինքնաբավ համայնք, միաժամանակ, 1 բնակչի հաշվով սեփական եկամուտների միջինացված ցուցանիշը ևս /7300 դրամ/ գործնականում չի կարելի բավարար համարել:*

➢ Ոչ մի գյուղում մանկապարտեզ չկա:

***Որպես առկա շեղումները չեզոքացնելու, ինչպես նաև համայնքի զարգացմանը նպաստող հիմնական միջոցառումներ պետք է դիտարկել՝***

- Միջբնակավայրային ավտոմոբիլային ճանապարհների, կրթական, առողջապահական և մշակութային հաստատությունների ընթացիկ կամ հիմնանորոգման աշխատանքների իրականացումը,

- Խոշորացվող համայնքի կենտրոն Եղեգիսում մանկապարտեզի կառուցումը, ինչպես նաև մշակույթի տան արդիականացումը և վերակառուցումը որպես մարզամշակութային կենտրոն,

- Հողային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացումը, մասնավորապես, անհրաժեշտ է համայնքային սեփականության հողերի օտարումը կամ օգտագործման իրավունքով տրամադրումը իրականացնել դրանց նպատակային օգտագործման երաշխիքների պարագայում,

Համայնքի զարգացմանը կարող է նպաստել տարածաշրջանում էկոտուրիզմի և մշակութային տուրիզմի տարածման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների տեղաբաշխմանն ուղղված ներդրումային ծրագրերի մշակումն ու իրականացումը:

Միաժամանակ, նոր ձևավորվող համայնքում ենթակառուցվածքների արդյունավետ տեղաբաշխման, դրանց պակասող օղակների լրացման խնդիրներում համալիր մոտեցումներ ապահովելու նպատակով ցանկալի է Եղեգիս համայնքի համար մշակել դրա տարածքային զարգացման նախագիծը:

***Եղեգիս համայնքի կազմավորումը կարող է ապահովել համայնքների խոշորացման հայեցակարգում ամրագրված հետևյալ հիմնական արդյունքները՝***

1. Մարդկային ռեսուրսների համախմբումը, ինչը թույլ կտա բարձրացնել համայնքի կառավարման արդյունավետությունը (որակյալ կադրեր, ընդլայնված կառավարման օբյեկտ, և այլն),

2. Ենթակառուցվածքների համախմբումը և ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացումը, ինչը թույլ կտա կենտրոնացնել փոշիացած ռեսուրսները և դրանց կառավարումն իրականացնել մեկ կենտրոնից, մշակել և իրականացնել համայնքային քաղաքականություն, որը փոքր համայնքներից շատերում բացակայում է,

3. Միավոր ծառայության վրա կատարվող ծախսերի նվազեցումը և ծառայությունների շրջանակի ընդլայնումը,

4. Ենթակառուցվածքների, մասնավորապես, էկոտուրիզմի և մշակութային տուրիզմի զարգացման համար ներդրվող գումարների առավել նպատակային և կենտրոնացված օգտագործումը,

5. Համապետական ծրագրերի իրականացման հնարավորությունների մեծացումը,

6. Տնտեսության ճյուղերի՝ հատկապես գյուղատնտեսության զարգացման համար ավելի մեծ հնարավորությունների ստեղծումը,

7. Բնական պաշարների հասանելիությունը և դրանցից օգտվելու հնարավորության ապահովումը գործնականում բոլոր բնակավայրերի բնակիչների համար:

Վերը թվարկվածից զատ համայնքի կազմավորումը թույլ կտա Վայոց Ձորի մարզի հյուսիսային հատվածի հետընթաց ապրող տարածաշրջանում տեսանելի ապագայում

կազմավորել տարաբնակեցման համակարգի նոր տեղային (զարգացման) կենտրոն, ինչի արդյունքում հանրային ծառայությունները հասանելի կլինեն գործնականում բոլոր գյուղերի բնակիչների համար:

Սույն զեկույցը լույս է տեսնում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ցուցաբերած աջակցության շնորհիվ:

Հրատարակության մեջ առկա տեսակետների պատասխանատվությունը կրում են հեղինակները և չեն արտացոլում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, ՇԶՀԳ և ԱՄՆ ՄԶԳ-ի և համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:

**Հրապարակված է**

Գերմանիայի միջազգային համագործակցության
ընկերության (ԳՄՀԸ) կողմից
Ընկերության գլխամասային գրասենյակներ՝
Բոնն և Էշբորն, Գերմանիա

**ԳՄՀԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիր**

Բաղրամյան պող. 4/1, 0019, Երևան
Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +374 (0) 10 58 05 39; 58 93 00
Ֆաքս՝ +374 (0) 10 58 92 70
Կայք՝ www.giz.de